# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## 1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

2015 թվականի սահմանադրական փոփոխությունները նշանավորեցին նոր Սահմանադրական դատարան ունենալու տեսլականը: Մասնավորապես, Սահմանադրությունը նախատեսեց Սահմանադրական դատարանի կազմավորման լիովին նոր կարգ, այն է՝ Սահմանադրական դատարանի ինը դատավորներին պետք է ընտրի Ազգային Ժողովը՝ երեքին Հանրապետության նախագահի, երեքին՝ Կառավարության, երեքին՝ դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ, իսկ Սահմանադրական դատարանի նախագահն ընտրվում է Սահմանադրական դատարանի կազմից՝ վեց տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու իրավունքի:

Հատկանշական է, որ Վենետիկի հանձնաժողովը Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ դեռևս իր առաջին կարծիքում նշել էր, որ Սահմանադրության 166-րդ հոդվածը, որը սահմանում է Սահմանադրական դատարանի դատավորների համար պաշտոնավարման 12 ամյա ժամկետ և Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում վերընտրման հնարավորության բացակայություն, համապատասխանում է եվրոպական փորձին[1]: Ավելին, հանձնաժողովը շեշտել էր, որ Սահմանադրական դատարանի նախագահի ընտրության նոր մոդելը Սահմանադրական դատարանի անկախության լավ երաշխիք է հանդիսանում[2]:

Սակայն, Սահմանադրության 213-րդ հոդվածի ուժով մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի նախագահը և

---

[1] CDL-AD(2015)037, պարբ. 165 (https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2015)037-e)

[2] CDL-AD(2015)037, պարբ. 166

անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը: Արդյունքում, Սահմանադրությամբ նախատեսված՝ Սահմանադրական դատարանի կազմավորման և Սահմանադրական դատարանի նախագահի ընտրության մոդելը դեռևս լիարժեքորեն կյանքի չի կոչվել, ինչը նաև հանգեցրել է Սահմանադրական դատարանի ներսում և դրա շուրջ առկա ճգնաժամի: Այդ ճգնաժամն այս պահին ունի մի քանի ասպեկտ, որոնք լրջագույն մարտահրավեր են Հայաստանի ժողովրդավարության, ինքնիշխանության եւ իրավական որակների համար:

Սահմանադրական դատարանի շուրջ ճգնաժամի առաջնային խնդիրը նախկինում նշանակված անդամների եւ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 7-րդ գլխով ընտրվող դատավորների կարգավիճակների ակնհայտ բովանդակային տարբերությունն է, որի մասին իրավական հանրությունում քննարկումները գնալով ավելի են թեժանում: Մասնավորապես, Սահմանադրական դատարանի ներկայիս կազմի պահպանմամբ Սահմանադրական դատարանը լրջագույն խնդիրների է բախվում Սահմանադրական դատարանի ներսում հավասարության ապահովման իմաստով, քանի որ դատարանի ներկայիս կազմի պահպանման դեպքում 2015 թվականի Սահմանադրությամբ ընտրված դատավորների եւ մինչ այդ նշանակված անդամների պաշտոնավարման ժամկետների միջեւ առկա է էական տարբերություն: Այսպես, մինչ նորընտիր դատավորները պաշտոնավարում են 12 տարով, նախկինում նշանակված անդամները, որոնք նշանակվել են 1995 թվականի Սահմանադրությամբ (Սահմանադրական դատարանի 2 անդամ), պաշտոնավարելու են մինչեւ 70 տարեկանը լրանալը, իսկ 2005 թվականի Սահմանադրությամբ (Սահմանադրական դատարանի 5 անդամ) նշանակվածները՝ մինչեւ 65 տարեկանը

լրանալը: Այլ խոսքով, ավելի պատկերավոր իրավիճակը ներկայացնելու համար, օրինակ Սահմանադրական դատարանի մի անդամը կարող է պաշտոնավարել գործող դատական կազմում 33 տարի (1996 թվականից մինչեւ 2029 թվականը), իսկ նորընտիր դատավորի համար այդ ժամկետը սահմանափակված է 12 տարով:

Հաջորդ խնդիրը Սահմանադրական դատարանի ժողովրդավարական լեգիտիմության բացակայությունն է, որում Սահմանադրական դատարանն ունի ուղղակի պատասխանատվության իր բաժինը՝ նախագահական եւ խորհրդարանական ընտրություններում ընտրական իրավունքի եւ ժողովրդի կողմից իր իշխանությունն ընտրելու երաշխիքների շարունակական անտեսման պատճառով հօգուտ օրվա իշխանության: Սա կործանարար ազդեցություն է ունեցել քաղաքացիների եւ հանրային իշխանության մարմինների կողմից Սահմանադրական դատարանի նկատմամբ ունեցած վստահությունը կորցնելու հարցում, ինչն անթույլատրելի վիճակ է սահմանադրական արդարադատության մարմնի համար: Իրողություն է, որ Սահմանադրական դատարանն այս պահին իր անդամների կազմով ամենացածր հեղինակություն վայելող հանրային իշխանության մարմիններից է եւ այդ հեղինակության վերականգնումն անհնար է նույն կազմի պահպանման դեպքում:

Արդյունքում, կարելի է փաստել, որ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի անդամի (դատավորի) պաշտոնավարումը 12 տարով սահմանափակելը բխում է սահմանադրի կամքից և համապատասխանում է եվրոպական փորձին, իսկ այս մեխանիզմի՝ ամբողջությամբ կյանքի կոչելը էական նշանակություն կունենա Սահմանադրական դատարանի շուրջ ստեղծված ճգնաժամի հաղթահարման գործում:

Ամբողջ վերոշարադրյալը վկայում է Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին՝ ներդնելու համար 2015 թվականի

Սահմանադրության փոփոխություններով նախատեսված՝ Սահմանադրական դատարանի կազմավորման նոր մոդելի գործարկման մեխանիզմ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկա կարգավորումների պայմաններում Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների ընդունման և դրանց ամբողջական կիրարկման միջև կարող է անցնել էականորեն երկար ժամանակահատված՝ դրանով իսկ խաթարելով 2015 թվականի Սահմանադրության փոփոխությունների էությունը:

**2. Առաջարկվող կարգավորման բնույթը**

Սահմանադրության փոփոխությունների նախագծով՝

1. Սահմանվում է, որ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված և Սահմանադրական դատարանի անդամի կամ դատավորի պաշտոնում ընդհանուր տևողությամբ ոչ պակաս, քան 12 տարի պաշտոնավարած Սահմանադրական դատարանի անդամների (դատավորների) լիազորությունների ժամկետը համարվում է ավարտված և նրանց պաշտոնավարումը դադարում է:

Նման կարգավորման էությունը հանգում է նախ նրան, որ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության տրամաբանությամբ՝ Սահմանադրական դատարանի դատավորների համար սահմանվում է պաշտոնավարման առավելագույն՝ 12 ամյա ժամկետ, ինչը, ինչպես նշվեց, համապատասխանում է լավագույն փորձին, միաժամանակ, ելնելով դատավորների անփոփոխելիության սկզբունքից, հնարավորություն է տալիս Սահմանադրական դատարանի դատավորներին շարունակելու իրենց պաշտոնավարումը՝ անկախ նրանց նշանակման ժամանակահատվածից՝ երաշխավորելով նաև նրանց գործունեության անկախությունը:

Այս մասով հարկ է շեշտել, որ առաջարկվող կարգավորմամբ ոչ պակաս, քան 12 տարվա պաշտոնավարման ժամանահատվածը ենթադրում է պաշտոնավարման տարիների ընդհանուր գումարային հաշվարկ՝ անկախ նրանից՝ պաշտոնավորումը որպես անդամ կամ դատավոր եղել է անընդհատ, թե ոչ: Հետևաբար, առաջարկվող կարգավորումը առնչվում է մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված և Սահմանադրական դատարանի անդամի կամ դատավորի պաշտոնում ընդհանուր տևողությամբ ոչ պակաս, քան 12 տարի պաշտոնավարած Սահմանադրական դատարանի բոլոր անդամներին՝ անկախ նրանց՝ տարբեր ժամանակահատվածներում պաշտոնավարած լինելու հանգամանքից: Այլ կերպ՝ այս կարգավորումը տարածվելու է նաև այն անդամների (դատավորների) վրա, որոնց պաշտոնավարումը եղել է ոչ անընդհատ՝ կապված տարբեր ժամանակահատվածներում, այդ թվում՝ նախորդ սահմանադրական փոփոխությունների միջև ընկած ժամանահատվածներում նրանց այդ պաշտոնից ազատվելու և հետագայում կրկին նշանակվելու հանգամանքից, սակայն պայմանով, որ նրանց ընդհանուր պաշտոնավարման գումարային ժամկետը 12 տարուց պակաս չլինի:

2. Նախատեսվում է, որ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված և դեռևս 12 տարի չպաշտոնավարած Սահմանադրական դատարանի մյուս անդամները շարունակում են պաշտոնավարել որպես Սահմանադրական դատարանի դատավոր մինչև այդ պաշտոնում նրանց պաշտոնավարման 12 տարին լրանալը՝ հաշվի առնելով նաև մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը որպես Սահմանադրական դատարանի անդամ պաշտոնավարած ժամկետը: Այսինքն Սահմանադրական դատարանի այն անդամները, որոնք մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ պաշտոնավարել են Սահմանադրական դատարանի անդամի պաշտոնում, այնուհետև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի

մեջ մտնելուց հետո շարունակել են պաշտոնավարել որպես Սահմանադրական դատարանի դատավոր, և նրանց այդ պաշտոններում պաշտոնավարման ընդհանուր ժամկետը չի գերազանցում 12 տարին, սույն փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո շարունակելու են պաշտոնավարել որպես Սահմանադրական դատարանի դատավոր:

3. Սահմանվում է, որ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնավարումը դադարում է և Սահմանադրության 166-րդ հոդվածի հիման վրա ու փոփոխվող՝ 213-րդ հոդվածով սահմանված առանձնահատկություններին համապատասխան ընտրվում է Սահմանադրական դատարանի նախագահ: Ըստ այդմ՝ սույն փոփոխություններն ուժի մեջ մտնելուց և Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնավարումը դադարելուց հետո Սահմանադրական դատարանի նախագահն ընտրվելու է Սահմանդրական դատարանի կազմից՝ վեց տարի ժամկետով, սակայն ընտրությունն իրականացվելու է միայն այն ժամանակ, երբ սույն փոփոխություններն ուժի մեջ մտնելուց և Սահմանադրական դատարանի անդամների պաշտոնավարումը դադարելուց առաջացած թափուր տեղերը ամբողջովին համալրված կլինեն:

**3. Ակնկալվող արդյունքը**

Սահմանադրության փոփոխությունների նախագծով ակնկալվում է լուծել Սահմանադրական դատարանի կազմի սահմանադրականության եւ դրա նկատմամբ հանրային վստահության բացակայության շուրջ առկա խնդիրները եւ երաշխավորել 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 7-րդ գլխի կանոններով նախատեսված՝ Սահմանադրական դատարանի ձեւավորման մոդելի

ամբողջական կիրարկումը: Արդյունքում կյանքի կկոչվեն 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ նախատեսված՝ Սահմանադրական դատարանի կազմավորման և գործունեության նոր մակարդակի ժողովրդավարական չափանիշները: